

ԹԵՈԴՈՐՈՍ ՄՈՊՍՈՒԵՍԱՑՈՒ ՄԱՏՏՈՒԲԻՈՏ-Ի
ԵՎ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ «ՄԱՇՏՈՑԱՆ» ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ
(X դար)

ՀՐԱԶ ԲԱՐՔԻՅԱՆ

Հրաչյա Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում» (հտ. 9, էջ 214—216) հիշում է «Մաշտոց» անունը կրող չորս անձնավորությունների. Մաշտոց եպիսկոպոս Սյունյաց, որին ձեռնադրեց Ներսես Ա կաթողիկոսը (353—373 թթ.), հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, Դվինի 554 թ. ժողովի մասնակից խորհրդունյաց եպիսկոպոս Մաշտոցը և, վերջապես, Մաշտոց եղիվարդեցի կաթողիկոսը (897—898 թթ.), որի մկրտությունն անունը, ըստ Հ. Աճառյանի, հավանաբար եղել է Ստեփանոս:

Բյուզանդական աղբյուրներում Մաշտոց անունը մինչև օրս հայտնի չէր, եթե նկատի չառնենք Թեոդորոս Մոպսուեստացու (մեռել է 428 թ.) «Περὶ τῆς ἐν Περσίδι μζρχιᾶς» («Յաղագս որ ի Պարսս մոզութեան») գրքույկից Փոտ պատրիարքի (IX դար) կատարած փոքր քաղվածքում հիշվող *Μαστούβιος* անունով հայաստանցի քորեպիսկոպոսին¹, որին Ն. Ադոնցը նույնացնում է Մաշտոցի հետ՝ *Μαστούβιος* գրությունը սրբագրելով *Μαστούζιος* կամ *Μαστούζιος*²: Այս առնչությամբ Ն. Ադոնցը անհրաժեշտ է գտնում ավելացնելու, որ «ոմանք թերևս գայթակղվեն կարդալու *Μαστούβιος*, այսինքն Մեսրոբ»³: Անվանի գիտնականը, սակայն, ելնելով այն հանգամանքից, որ «Մեսրոբ, ավելի ճիշտ՝ Մեսրոպ» անունը Կորյունն ու Ղազար Փարպեցին չգիտեն, գիտեն միայն «Մաշթոց» անունը, որ «Մեսրոպը» առաջին անգամ Մովսես խորենացին է գործածում, հարց է տալիս. Մեսրոպ գրելու համար «ի՞նչ հիմք ունեն մեր պատմահայրը, անհայտ է. մինչև խնդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոցը»⁴:

Բայց, երևի, Թեոդորոս Մոպսուեստացու *Μαστούβιος*-ը, այդուհանդերձ, պիտի համարել ոչ թե «Մաշտոց», այլ «Մեսրոպ» և *Μαστούβιος*-ը ուղղել ոչ թե *Μασρούβιος*, ինչպես կարծում է Ն. Ադոնցը, այլ *Μαστρούβιος*: Այդ բանը պնդելու համար հիմք է տալիս Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1069 թվակիր № 10434 ձեռագիր Ավետարանի Անանիա Սարգսցու (Վարագացու) հիշատակարանը, որտեղ, ի միջի այլոց, հիշյալ Ավետարանի մասին ասվում է. «...մանաանդ վասն [ստուգու]թեան սորին և ընտրութեան բանի [ն աւետար]անի և տնահատի և ամենայն արուեստի, որ էր վկայեալ արքինական յամենայն գիտնականաց հայոց զոր ասէին յասանդութենէ գրեալ ձեռամբ սրբոյն Մաստրովբայ վարդապետի և քարգմանչի...» (էջ 286բ—287ա)⁵: Անկասկած է, որ տվյալ հիշատակարանի «Մաստրովբայ»

¹ Photius, Bibliothèque. Texte établi et traduit par René Henry, t. I, Paris, 1959, p. 187.

² Ն. Ադոնց, *Մաշթոց* և նրա աշակերտները, Վիեննա, 1925, էջ 8—9:

³ Նույն տեղում, էջ 9:

⁴ Նույն տեղում:

⁵ Հիշատակարանի մեղ մատնացույց է արել Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Զուգասդյանը, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ընթերցվածը «Մաշտոց» չէ, «Մեսրոբ» (Մեսրոպ) է: Հետևաբար Թեոփոստ Մոպսուեստացու Մատթեոսի-ի մեր ուղղումը՝ Մատթեոս (Մաստրու-բիոս կարդացվում է նաև Մաստրուպիոս) հիմնավորվում է: Սրանով էլ բյուզանդական աղբյուրներում «Մաշտոց» անվան մինչև օրս հայտնի միակ ենթադրյալ հիշատակությունը չի հաստատվում:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր «Մաշտոցները» (բացի Մեսրոպ Մաշտոցից) գործել են Հայաստանում, ավելի ճիշտ՝ Արևելյան Հայաստանում: Մինչև օրս հայտնի չէր Բյուզանդական կայսրության մեջ գործունեություն ծավալած որևէ այլ Մաշտոց: Այնինչ, ինչպես պիտի տեսնենք ստորև, այդպիսին եղել է:

Կոստանդին Միրանաթին կայսեր (913—959 թթ.) կարգադրությամբ ստեղծված մի հանձնաժողով ձեռնամուխ եղավ շարունակելու Թեոփանես խոստովանողի 813 թ. դեպքերով ավարտվող ժամանակագրությունը: Հանձնաժողովը գործը գլուխ բերեց և պատմագրության այն հայտնի է «Թեոփանեսի Շարունակող» խորագրով: Աշխատության հեղինակները լայնորեն օգտագործել են բյուզանդական արքունիքի դիվանը, որով պատմական այդ երկը աչքի է ընկնում իր արժանահավատությամբ: Այն օգտագործել են հետագա շրջանի բյուզանդական բազմաթիվ հեղինակներ:

Ռոմանոս Ա Լեկապենոսի գահ բարձրանալու (920 թ. դեկտեմբերի 24) տարին մանկահասակ Կոստանդին Միրանաթինի դաստիարակ Թեոփոստի դրդմամբ, Ռոմանոսը դավադրություն կազմակերպեց և ձերբակալեց Կոստանդինի պարսկիմոնենոսին՝ կայսեր սենեկապետին, որը, Թեոփանեսի Շարունակողի ասելով, նպատակ ուներ հեղաշրջման միջոցով տապալել Կոստանդին Միրանաթինին և գահ նստեցնել իր փեսա Լեոն Փոկասին: Բայց քանի որ Ռոմանոս Լեկապենոսի քայլը դավադրություն որակվեց, ապա նա ստիպված էր հանդես գալ պաշտպանականով: Նա 920 թ. մարտի 24-ին Վերմոնիմ և շատ վստահելի Հովհաննես երեցին և Թեոփոստ Մացուկիսին պալատ ուղարկեց հանդես գալու իր պաշտպանությամբ, ասելու, թե իմ քայլը խռովություն չէր: Կասկածելով, որ Փոկասը հնարավոր է հեղաշրջում կկատարի և երկյուղելով, որ նա կարող է կայսեր վնասել, դրա համար է, որ ուղում եմ պալատ բարձրանալ՝ պահպանելու համար կայսեր»⁶: Ինչպես տեսնում ենք, Ռոմանոս Լեկապենոսի ամենամտերիմ մարդկանցից մեկը կոչվում էր Թեոփոստ Մացուկիս (Θεοφωστος ὁ Ματζούχης): Բայց Թեոփանեսի Շարունակողի աղբյուրներից օգտվող Գեորգ Վանականի Շարունակողը, նույն պատմությունը տալով, Թեոփոստի մականունը այլ կերպ է հիշում՝ Θεοφωστος ὁ Ματθεοσις⁷: Եթե հանենք հունարենի համար հատուկ արական անունների «ւ» (αἰς) վերջավորությունը, ապա մեզ կմնա Ματ(ε)οσις-ը, որը միայն «Մաշտոց» կարելի է կարդալ (հունարենում չկա «շ» հնչյունը և, բնականորեն՝ տառը, նրա փոխարեն գրվում է «ս»):

Եթե հարց ծագի, այս երկու ընթերցումներից՝ Ματ(ε)οσις — Ματ(ε)οσις ո՞ր մեկն է ճիշտ, ապա պատմաբանի համար դժվար չէ որոշել, իհարկե Գեորգ Վանականին: Թեոփանեսի Շարունակողի Մացուկիսը հունարենում իմաստ ունի, նշանակում է «բերի», «գավազան», «գուրգռ»⁸: հույնի համար միանգամայն հասկանալի այդ բառը չէր կարող գրիչների մեղքով աղավաղվել, բյու-

⁶ „Theophanes Continuatus“, Bonnae, 1838, p. 393.

⁷ Georgii Monachi Vitae Imperatorum recentiorum, In: Theophanes Continuatus, p. 885.

⁸ ματζούχ, It. mazza, F. masse, E. mace, club, stake. E. A. Sophocles, Grec Lexicon of the Roman and Byzantine Periods (from B. C. 146 to A. D. 1100), vol. II, p. 736.

զանդացու համար անիմատո նշանակություն ստանալ: Հակառակը՝ միանգամայն հավանական է:

Այսպիսով, մեզ հայտնի է դառնում Ռոմանոս Լեկապենոսի ժամանակաշրջանում գործած ես մի նշանավոր հայ (Մաշտոց մականունը չէր կարող հույնը կրել), որ «Մաշտոցը» Բյուզանդիայում այդ շրջանում ստացել էր ազգանվան նշանակություն⁹, այն կրողն ունի անուն՝ Թեոդորոս, հետևաբար պիտի ենթադրել, որ «Մաշտոցյանները» բյուզանդական որոշակի ընտանիք են եղել: Պարզվում է նաև, որ հայազգի Ռոմանոս Լեկապենոս կայսրը, նախքան գահին տիրանալը, իր ծառայության մեջ ուներ հայազգի գործիչներ էլ, որոնք ընկան է, նրա համար ավելի վստահելի պիտի լինեին:

О МАШТОЦЬЮС-Е ФЕОДОРА, ЕПИСКОПА МОПСУЕСТИИ, И ВИЗАНТИЙСКОМ РОДЕ «МАШТОЦЯН» (X ВЕК)

РАЧ БАРТИКЯН

Резюме

В армянских средневековых источниках известны всего четыре лица, носивших имя Маштоц. Одним из них является создатель армянского алфавита Месроп Маштоц. В византийских источниках это армянское имя не встречается. В извлечениях патриарха Фотия из утерянного труда епископа Мопсуестии Феодора, озаглавленного «О магии в Персиде», упоминается хореепископ по имени *Μαστούβιος*. Переправляя это имя на *Μαστούζιος* или *Μαστούτζιος*, Н. Адонци отождествляет его с именем Маштоц, а человека, носившего его, с Месропом Маштоцем. В памятной записи хранящегося в Матенадаране (№ 10434) армянского евангелия от 1069 г. имя создателя армянского алфавита Месроп приводится как *Մաստրովբ* (Мастровб), которое более совпадает с *Μαστούβιος* (в нашем исправлении—*Μαστρούβιος*) труда Феодора, епископа Мопсуестии. В Византии не были известны армянские деятели, носившие имя Маштоц. Однако фамилия упоминаемого Георгием Монахом Феодора, близкого Роману Лекапину (920—944 гг.) человека, *Μαστζούσ(ις)* не что иное, как армянское имя Маштоц, превратившееся в Византии в родовое, что предполагает наличие и других деятелей того же рода.

⁹ *Մաշտոց* *Րօսթենիօս* (Ռուբեն) նշանակում է և Ռուբինյան: Աննա Կոմենենը իշխան Կոստանզիի որդիներ Թորոսին և Լևոնին հղում է *Րօսթենիօս*, Ռուբինյաններ. *Appel Comptene Aléxiade*, ed. B. Leib, t. III, Paris, 1945. p. 134. Պատկանելի են Թորոս Ռուբինյանի հնդեները, որոնց վրա դրված է. «*Θεόδωρος Ροσπένιος*», В. С. Шандровская. К истории армяно-византийских отношений XII в. (ՀՄՄՀ ԳԱ «Լրագրեր» 1974, № 4, էջ 87):